Սուրբ գրությունների անհատական ուսումնասիրության սովորույթներ

Հետևյալ դրույթներից յուրաքանչյուրի համար գնահատեք ձեզ՝ հիմնվելով հետևյալ աստիճանակարգի վրա.

1= Երբեք
2=Երբեմն
3=Գրեթե ժամանակի կեսը
4=Գրեթե միշտ

_____ Ես աղոթում եմ և խնդրում Երկնային Հորը օրհնել ինձ Հոգով, երբ ես ուսումնասիրում եմ սուրբ գրությունները:

_____ Ես ձգտում եմ ուսումնասիրել սուրբ գրությունները մի ժամանակաընթացքում և տեղում, որտեղ ես կարող եմ բացառել խանգարող հանգամանքները:

_____ Ես օգտագործում եմ ուսումնասիրության օրագիր, երբ ուսումնասիրում եմ սուրբ գրությունները, որպեսզի կարողանամ գրի առնել այն, ինչ սովորում եմ:

_____ Ողջ օրվա ընթացքում ես մտածում եմ այն բաների մասին, ինչ ուսումնասիրել եմ, և թե ինչպես այն կարող է օգնել ինձ կյանքում:

_____ Ես գրի եմ առնում մտքերս և զգացումներս սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում:

_____ Երբեմն ես ուսումնասիրում եմ սուրբ գրությունները թեմաներով, որպեսզի մեծացնեմ հասկացողությունս հատուկ վարդապետությունների կամ հոգևոր ճշմարտությունների վերաբերյալ:

_____ Ես գործում եմ օրվա ընթացքում ըստ իմ սովորածի:

_____ Ես օգտագործում եմ սուրբ գրությունների ուսումնասիրության օժանդակ նյութերը, ինչպես օրինակ՝ ծանոթությունները, Թեմատիկ Ուղեցույցը և Աստվածաշնչյան Բառարանը, որպեսզի ավելի լավ հասկանամ սուրբ գրությունների հատվածները:

_____ Ես նշում եմ սուրբ գրությունները մի ձևով, որն օգնում է ինձ հիշել կարևոր բաները, որոնք ես սովորել եմ:

_____ Ես ձգտում եմ ավելի շուտ հասկանալ, ինչ ես կարդում եմ, քան ուղղակի խոսքերը կարդալ:

Վերոհիշյալ ոլորտներից ո՞ր մեկը կամ երկուսը, ձեր կարծիքով, կարող է փոխել սուրբ գրությունների ձեր ուսումնասիրությունը և Հոգով սովորելու ձեր ունակությունը: Ի՞նչ կպահանջվի ձեզանից, որպեսզի դարձնեք այս սովորույթը ամենօրյա ձեր կանոնավոր ուսումնասիրության մի մասը:

© 2014 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՆ: